ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Ա. Կենդանաբանութիւն. Բ. Բուսաբանութիւն. վարժարաններու և գիմնազիոններու համար։

Այս վերնագրով լոյս տեսաւ Վիեննայի Մխիթարեան տպարանից Հ. Գաբրիէլ Վ. Է. Մէնէվիշեանի աշխատասիրութեան առաջին երկու մասերը. սպասուում է և երրորդ մասը՝ Հանքաբանութիւն։

Դասագրքի երկու մասի էլ առաջին երեսում տպագրուած է Պօլսոյ ուսումնական խորհրդոյ վաւերացումն, որով՝ «զկնի պարտուպատշաճ քննութեան» խորհուրդը գտել է՝ «ըստ ամենայնի դիւրուսոյց և օգտակար ի պէտս Հայ մանկտւոյն. ուստի և կարտօնէ և կը յանձնարարէ յիշեալ դասագրքին գործադրութիւնն յազգային վարժարանս»։

Առաջին գրքի յառաջաբանից տեղեկանում ենք, որ Հ. աշխատասիրողը 1883 թուին ուսուցիչ կարգուելով բնական պատմութեան, Հայոց լեզուով դասագրքի պակասութեան պատճառով ստիպուած է եղել օտար լեզուով դասագրքերի օգնութեան դիմել և ընտրել է Աւստրիոյ և Գերմանիոյ միջնակարգ դպրոցներում ցարդ գործ դրուող Ա. Պոկորնու պատկերազարդ բնական պատմութեան երեք դասագիրքը՝ Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն և Հանքաբանութիւն — (A. Pokorny. Illustriete Vaturgeschichte, I. Thierreich, II. Pflanzenreich, III. Minerelogie).

Սկզբում 1½ տարուայ ընթացքում Հ. Մէնէվիշեանը իւր անձնական գործածութեան համար թարգմանում է վերոյիշեալ երեք հատորը հայերէն։ Այդ թարգմանութիւնը տարիների ընթացքում սրբագրելուց և կարևոր փոփոխութիւններ անելուց յետոյ, միայն 1895 թուին Հ. աշխատասիրողը ձեռնարկել է տպագրութեան, որ մեծ յաջողութեամբ այսօր ի գլուխ եկած ենք տեսնում առաջին երկու հատորների վերաբերութեամբ, որոնց անշուշտ կը հետևի նաև երրորդ և վերջին հատորը։

Ճշմարիտ է, կան մեր գրականութեան մէջ մի քանի դասագրքեր բնական պատմութեան, սակայն ի բաց առեալ բուսաբանութիւնը, կենդանաբանութեան և մանաւանդ հանքաբանութեան վերաբերեալները շատ աննշան աշխատութիւններ են և ոչ մի գիտնական կամ մանկավարժական արժէք չունին։

Երկու հատորն էլ Հ. աշխատասիրողը զարդարել է գեղեցիկ պատկերներով՝ առաջին մասում 480 և երկրորդում՝ 373։ Մեծ ցանկութիւն է ունեցել Հ. աշխատասիրողը գունաւոր պատկերներով հրատարակել իւր գիրքը, բայց ասում է, «անկարող եղանք առ այժմ համարձակել այսպիսի հրատարակութեան մը»։ Ընայելով, որ պատկերները սև գոյնով են տպագրուած, այնուամենայնիւ այնքան ընտիր են և նուրբ, որ պատիւ են բերում հրատարակչին, որ ոչ մի ջանք չի խնայել իւր դասագիրքը թէ՛ ուսուցչաց և թէ՛ ուսանողաց համար արդիւնաւոր անելու։ Իւրաքանչիւր պատկերի տակ նշանակուած է կենդանու և բոյսի և նոցա մասերի համեմատական մեծութիւնը, որ մեծ յարմարութիւն է ընթերցողի համար։

Ինչպէս երևում է Հ. աշխատասիրողը մեծ խնամքով ժողովել է անունները և ըստ կարելւոյն ճշտելով կողքին դրել է նաև լատիներէն անուանակոչութիւնը, որով միջոց է տալիս ստուգելու դասագրքի մէջ գործածածների ճշտութիւնը։ Իրաւացի նկատում է Հ. աշխատասիրողը, որ՝ «հայերէն անուանակոչութեան մէջ կատարեալ անիշխանութիւն երբ տիրէ, ի զուր է սպասել, որ աշակերտներուն մտաց մէջ բնական պատմութեան ծանօթութեանց պաշարը զարգանայ»։ Գովելի է Հ. Մէնէվեշեանի ջանքը այս խնդրում և ցանկալի է, որ նորա հրաւէրը ուղարկել իւրեան «ամենափոքր դիտողութիւնն» անգամ, արձագանք գտնի մեր բանասէրների մէջ՝ որպէս զի հետևեալ տպագրութիւնները հետզհետէ աւելի և աւելի սրբագրուած և ուղղուած ի լոյս ընծայուին։

Կենդանաբանութիւնը բաղկացած է ԺԵ+364 երեսներից, իսկ բուսաբանութիւնը ԺԱ+344 երեսից։

Երկու մասի վերջումն էլ տեղաւորուած է ցանկ անուանց՝ հայերէն և լատիներէն։

Տպագրութիւնը մաքուր է և թուղթը ընտիր։ Գինն է իւրաքանչիւր մասի 1 ռ. 85 կ. (4։ 25 ֆր.)։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

1. Պատկերազարդ բնական պատմութիւն, Հ. Գաբրիէլ Վ. Է. Մինէվիշեան. Վիեննա. 1787։
   Ա. Կենդանաբանութիւն, գինն է 1 ռ. 85 կ.
   Բ. Բուսաբանութիւն. գինն է 1 ռ. 85 կ.

2. Հաջի Աբրէք, թարգմ. Սիմ. Հովուեան Բագու, 1897։ գինն է 5 կ.։

3. Ընտանի կենդանիներ, Ա. Զիլինկարեան և Տ. Ռաշմաճեան. Ալէքսանդրապոլ. 1897։ Հրատարակչուհի Տիկին Եղիսաբէթ Արամեանց. գինն 5 կ.։